ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Երևան, Կոմիտաս 49/3 հեռ. (+374 10) 201438
Էլ.փոստ e-register@moj.am

N /25.1/24082-2023
22.03.2023թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ՝ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(ք. Երևան Փ. Բուզանդի փ. 1/3, 4-րդ հարկ, էլ. փոստ՝ foi@foi.am)

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն) էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով հասցեագրած 12.05.2023թ. Ձեր հ. 811414 դիմումի՝ տեղեկացնում եմ, որ 12.05.2023թ. դրությամբ ներկայացվել են ընդհանուր թվով 48909 իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրեր, որոնցից 46566-ը ներկայացվել են 01.01.2023-12.05.2023թթ. ընկած ժամանակահատվածում:

Տեղեկացնում եմ նաև, որ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց թիվը գերազանցում է հարյուր տասը հազարը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի ներկայացվածության մասին տեղեկատվություն տրամադրել հնարավոր չէ, քանի որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության https://bo.e-register.am էլեկտրոնային կայքում առկա չէ ներկայացված իրական

շահառուների վերաբերյալ հայտարարագրերի, ըստ առանձին կազմակերպական-իրավական ձևի, տեսակավորման հնարավորություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

ՏԱԹԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ

ՏԱԹԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN TATEV 7001910902

Կատ.՝ Հռիփսիմե Իսկանդարյան
Հեռ.՝ 010 20 14 38